ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ << ՀՀ Արարատի մարզի Խաչփարի միջնակարգ դպրոց >> ՊՈԱԿ-ում «Դասվար »/19 դասաժամ/, «Տեխնոլոգիա» /4դասաժամ, տղաների խումբ/,« Երաժշտություն » /4դասաժամ/, « Ֆիզիկա » /16 դասաժամ/, « Կենսաբանություն» /12 դասաժամ/, « Բնություն» /5 դասաժամ/, «Իմ հայրենիքը» / 2 դասաժամ/, «Իմ հայրենիքը և աշխարհը»/3 դասաժամ/ թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՄՆ մշակված հարցաշարի:

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է ըստ դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է /Ձև 1/,
2. Փաստաթուղթ /դիպլոմ/ << Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,
3. Անձնագրի պատճենը,
4. Ինքնակենսագրություն /Ձև 4/,
5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հաստատող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները /դրանց առկայության դեպքում/,
6. Մեկ լուսանկար՝ 3x4 չափի
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:
Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև **սեպտեմբերի 3-ից մինչև սեպտեմբերի 13-ը** ներառյալ, ամեն օր՝ 9:00-ից մինչև 15:00 բացի շաբաթ և կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:
Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:
Մրցույթը տեղի կունենա սեպտեմբերի **18-ին, ժամը 14:30-ին** Խաչփարի միջնակարգ դպրոցում, հասցեն ՀՀ Արարատի մարզ գ. Խաչփար , 5-րդ փող. 15շ :

Տեղեկությունների համար զանգահարել 055-131-211 հեռախոսահամարով: